ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄԱՌՆ

Եկանէ հրակայաբերձ Արև, և զիւր մեծ զօրութիւն
Տրպաւորէ ընդ աչխարհ. բոցավառեալքն ճառագայթ
Վերընձիւղէ զարմրտիս և ըզպրտուղս. և անդ ուրեմն
Ի դաշտորայս 'ի Հանդէս կոր երկաթոյն առնեն վաստակ
Արտունձք ըզսայրասուրս. յանբաւ խոտոց կրտրօն լընու
Կաթոգին ոգի փլորայ, և տամկանան երկինք 'ի նոյն։
Ըմպեն ազգելիք զանելեւոյթն անուշութիւն.
Կեանս առնու սիրտ։ Ամդուստ բոկոտքն գիւղականք, կանայք ե՛աղջկունք
Դիմեն 'ի զառ 'ի թափն, և ընդ ջրմուղս և ջրադարձս
Զուլխան երագասահ դարձուցանեն ընդ դաշտաց գիւր.
Ալիք յորդավրտակ յորդեն զեղուն, իջեալք հանուր
Բեղնաւորել զարուգ ըզծիլս և ըզցօղուն ծարաւահիւծ,
Սընունդ կենաց 'ի մըտուրս և ակօսից տուրք պարգևաց։
Բարեբաստ այն գետին՝ ում բարերար զով աղբերօք
Իջանէր ըբնութիւն և առուակօք սողոսկընթաց.
Եւ որ ըզգօն նոյնպէս յալեացն երախտաշնորհ յառուս հանել
Ուրդրս բանաց՝ ըզդիւրս հարթէ, կազմէ 'ի ճահ ձրկնատեսանս,
Եւ վայրընկէց հընարիւք յուպէտ յուկամ զայնրս վարեալ՝
Բաշխէ 'ի մարգ ընդ ակօսս, ընդ եզևինս և նըշդարիս,
Չի ըզյուռթին և ըզմրճ գալարութիւն հանապազօր
Հատուցէ դաշտորայն, մինչ դրբակիցն անգործ և խօլ
Անձնապահ լեալ առ խէթ՝ նրաւդեսցի ժամավաճառ
Առ 'ի ներքոյ սատկութեան տապոյ հընկանքն հրբակէզ։...

Վերյառնեն յոճ ցորեանք 'ի ծիլ. և դուք եկէք ծն չինական
Ցրեաբ բարեպարիշտ, հայցել բերոց ըզշնորհ վերին,
Ցանուան ողջունելով զաստուածային՝ ոյց տուան 'ի պահ
Ցօղք, անձրևունք, հողմք, արևակք և վարչութիւն օդոց ե՛երկրի։
Հանդէս տօնախումբ երեքօրեայ. վարդի յառաջ
Ի գանչիւն պրղընձեացն առաւտին հրրճուղաձայն,
Վարդի դասն յերկուս յառաջս, և յամենայն անցրս չինին
Ընդ դաշտ, ընդ լեառն, ընդ աւանն և գիւղաւան ջուր տուրբ ցօղէ։
Վերաբերին 'ի հանդիպոյ գինուորութեանց գրելոց յերկինս
Նրշանք օգաթրոիչք, երանաւէտ պատկերագրոչմք
Ցորովք շուրջ ոմրն չրքնաղ ըզվերջաւորսրն վարելով,
Այլ ոք ևրս սիրային կրեբով սաղարդս և զարդուց վառս՝
Խրմբին կուսանք և պատանեակք, հաւատի գունդ անմեղութեան.
Ըղհետ նոցին գընան ձիգ աղօթաձև 'ի պայմանի
Հասակք յառաջադէմք. և գայ ըղհետ ամենեցուն

digitised by A.R.A.R.@

Ի ճերմակ կրտաւիս և ուրարաւ ծիրաններին
Բարի տեսուչն ընտիր հօտին, արդոյ 'ի գնացս իւր և 'ի դէմս,
Կախելով յամենայն անցս և յամենայն դիտեալ տեղիս
Սրբանուէր արդարիս, և ձեռնամած ուղերձելով
Ըզզօրութիւնս երկնային, խորհրդաւոր ծխիւք ցօղման
Ըզհունձս օրհնեալ. դաս առ դաս հնչէն ուխտից երգք եռանդուն
Եւ անդաստանք և անտառք կրկնեն ըզձայնսն ողբանրաւագ....

Այն ինչ ըզպատեանսն որովք փակեալ կայր պընդակապ
Ելոյծ ցօղունն և կանգնեցաւ ուղղորդ ընդ օդս, յարև 'ի ցօղ,
Տեսանես ծագել 'ի ծայրըն նուրբ 'ի ծիլ, և շէշտիլ նուրբ
Փափկիկ ծաղկօք սիրասին և ուռճալիր 'ի հատս յոլով
Աճեցուն ծառք և պարծ հասկ նորաբոյս խարտիչագեղ
Եւ 'ի քիստ պատնիշափակ ընդդէմ հաւուցն որկորաձէտ
Կազմել պատուար Թշնամանաց։ Եւ ո՜հ, տեսել որպիսի՜։
Որպէս սովոր է 'ի շունչ մեղմիկ հողմոյն տարուբերել
Ետ ընդ ետ ծով խաղաղիկ, անթիւ ալիք կարգ ըստ կարգէ
Մերթ գիրերօք ամբառնան և հովտաձև մերթ դաշտանան.
Այսպ փշրին 'ի բաղխիւն և ընդ փշրելն են փրփրիցայտ.
Մարգագետինն անկայուն զարմանազան գունագեղի,
Եւ ափունք կրկնեն դարձուած քաղցրահնչակ 'ի շառաչիւն։
Սապէս հունձք արեգաւէտ երփնին յոսկի, ւ'ի շունչ հողմոյն
Վէտ վէտ շողան լուսացայտիւք, և շշշնջէ խուլ սարսափիւն,
Եւ գոգցես բերկրեալ 'ի խինդ դաշտըն շարժի աստանդական։

Էր ուրեմն յապաղել։ Արդէն Արև շէշտ կրչռակի
Ա՛ռ ահեղ Աւիւծուն տէգս 'ի վերուստ թափէ հրակէզ.
Նաւաղի թառամ ծաղիկն հովտին, վրտակ լերին լայ մեղմ հեծունչ
Ընդ դաշտս և ընդ մայրիս թալկանայ գեղ գալարութեան,
Եւ գետինն երաշտացեալ՝ ճեղքեալ 'ի խինձրս պատառի.
Անդուստ ճրպուռն տաղտկալի և անբսպառ սուլիցն 'ի ճիչ
Զարտունձն 'ի փոյթ ըշտապէ, և անդ ուրեմն հաստնացեալ
Կայ հաստաջով հասկն յոստչել. ընդէ՞ր այլ ևս անդանել։

Սակայն 'ի դէմս առ իմ այդքան թալկութիւն անակընկալ,
Եւ առ իմ՝ լուռ հառաչ և թախծագին հայել երկար
Ի գագաթունրս լերանց ակընկառոյց ականողեաց։
Ամպ փոքրիկ յածի անդէն՝ պանդուխտ երկնից, անձրևածին
Եւ բարեչնորհ, ո՛ գիտէ, ցամաք հովտաց և ջուրց լերանց։
Սակայն անդ 'ի մայրիս՝ կայծակնահար կաղնւոյն գ'ոստովք
Կոկորդալիր կանչէ ագռաւ. և ըղձատենչ կարապն յաղբիւր
Մբախիրճ հարեալ յողողանել շաչիւն հանէ քրմահանդ
Եւ գրնաց թեատրարած. առ լեռնոտամբրն խոտաւէտ
Բերկրի երինջ ծքոել նոր շունչ, կալեալ զցրռուկն ընդ օդս 'ի վեր.
Ցիծառնիկք կայտառեն 'ի խինդ, խայտան յանջուր բադք յաւազին,
Եւ գորտեանն 'ի ճախին ըզկին կեղերջն առնու կըրկնել։

Արկած ազետաբեր. խաւարանան յանակընկալս
Երկինք 'ի գիշեր. զանխուլ և համբր գըղըրդիւն
Ի խորոց ծագաց երկնից լինի ըսփիւռ լրսելի,
Եւ ահա սուլէ հողմն և առ 'ի շեղ խառն յորձանօք
Գրոհ տայ ընդ դաշտս և մայրիս. ըղաղարդունրս խորտակէ,
Հոլովէ փոչի ընդ օդ, և 'ի յոլորս իւր պրտուտից
Ջերկին և զերկիր մոլեգնաբար խառնէ 'ի մի։
Մինչ այս մինչ այն, յամրափակեալ օթևանէն ոստոյի 'ի դուրս

digitised by A.R.A.R.@

Հեծութիւն մեղմաձայն և թախանձանք ողորմաղերս
Որ գեղուն ըղձօգիս։ Բարեպարիշտ բորբոքին ջահք
Ի սեղան գերդաստանին և ձիթենին շաչէ 'ի ծուխ։
Սակայն ոչ դադարէ մոլեգնութիւնն ամպրոպային
Եւ գոռք հողմոց, և ամպոց թանձրատարած սըրտմըտութիւն։
Թուալի որոտումն ահագնաձայն դըղըրդելով
Եւ ցեղու զամենայն յիւրն արշաւան, յահ և 'ի հոյն
Լըցեալ ըզմութն անպարագիր։ Ցաջորդէ սուղ հանդարտութիւն,
Դառնաղէտ գուշակ սըրտից անհընարին թըշուառութեան։
Ո՛վ Տէր, կայծակըն թօթափի շառաչաձայն· մարք սարսռագին
Պընդեն զորդիս 'ի ծոցի, երկինք տեղան ջաղբս անձրևաց·
Եւ ըզտանիս բընակութեանց խառն ընդ բոմբիւնն և դըղըրդիւն
Եւ զարտօրէս կըռփահար կուռ 'ի կոփիւն կոծէ կարկուտ։

Ահա էանց ամպրոպաց մըրրկեալ զայրոյթ· ուրախալիր
Ի կապոյտ դրունս արևմտից զոսկւոյ խորանսն հարկանէ վեհ
Համագոյից բերկրութիւն շըքեղաճոխ շողիւքն արփին·
Վառին ամպք 'ի հանդիպոջ գեղեցկութիւն վըսեմ երփնից
Կերպարանաց, ձևոց· քըրքըումք, ծիւնք, կարկեհանք, վարդք, շափիւղայք,
Լերինք, ձորահովիտք, և անտառակք և բուրաստանք·
Ընդ որս աչք կորընչին, և արբենայ սիրտ հիասքանչ։
Ըզլոյսն ըսփիռ ծըծեն օդք, ալիք 'ի լոյսն եթերային
Ծաւալին զիրերօք· երևս երկրի նըշուլազարդ
Դարձ առնէ վառ 'ի վառ 'ի բերկրութիւն և յառոյգ գեղ։

Վերկենցաղի յեղանակն· ծն ձեռն 'ի գործ արտունձք կարշնեղ։
Ահա դիմեալ յառաջէ մանգաղակիր կարգեալ փաղանգ՝
Բանակ Դեմետրեայ· ահա բազուկըս մերկացեալ
Դիտես խոնարհ դայնս 'ի գետին և զծընկակապսն առաջափունջ
Ունել յահեակ, և խոփոյն շըրջան տըւեալ գալարաձև
Աջով ձեռին շուրջանակի հընձել ըզջօվսըն հասկաթուռ
Եւ հերակտուր առնել զակոսս։ Եւ ոչ եռանդըն դանդաղէ։
Զերդ յաղթողք յետ յարձակմանն և Արիսեան գուպարածի
Սովորեալք են դասովին երթևեկել խըրոխտապանծ
Ցանշըքացեալ 'ի դաշտին ըզթըշնամեաց դիզել կապուտ,
Կանգնել ախոյեանս և տօնել ծիգ ըզյաղթութիւնս·
Ոչ այլազգ ընդ ակօսս հընձեալ փաղանգըն դեմետրեան
Դէզս յօրան չեղջակուտէ խըռնել գաղիշըս բարդ 'ի բարդ·
Եւ սայլք և կառք շըռընչեն, ընդ բեռն հեծունչ սեռնըն ճըչի։
Մըթերեալն հունձ ուր ուրեմն ուրախալիր ծափաձայնիւք
Մըտանէ ընդ անդաստակս և շինանիստն հըրճուիւք հընչէ։

Ելէք դուք արդ մանկամարդ շինականեր 'ի հասկաքաղ,
Հետամուտք ընդ ակօսս, և ոչ լիցի ոք խոշընդոտն
Ըղձիցդ ըզգօնական վարձ այսպիսի դուզնաքեայ,
Եւ կըքրեսցի շօպել զորայս 'ի գեղեցիկ ճերմակ ձեռաց։
Ձեր բաղդ, օրիորդիկք· և դուք լերուք ազնըւասիրտք
Առ Տէր ձեր հատուցմամբդ և յարգանօք մեծամեծար·
Եւ իբրև կին ձեզ յուշ լիցի՝ վըստահ յեռանդըն երկիւղած
Մովաբայ կին խոնարհ, այն որ եղև վերընկալեալ
Ցանդաստանէն ուր քաղէր հունձ՝ բարեբջանիկն 'ի սըրսկապան։
Ցառաջեա, Տէրն ազնիւ ասէր, տեսեալ զերկիւղածիկն,
Եւ գութ անկաւ 'ի սըրտին ընդ կերպարանսըն սիրալիր·
Եւ դուք, ընտանեակք, մի ինչ խափան լինիք նըմին·
Նա՛ խըռնամով այսր և անդր անթանոցիկս ինչ սըփռեցէք,

digitised by A.R.A.R.@

Զի դա առանց չիկնելոյ զըւարճասցի 'ի ժողովնըլ․
Եւ ինքն ըզգոյշ քաղցրահամբոյր՝ որ կայրն ողորմ լըքեալ այրի
Գարձուցանէր հայեցիւք զպատասխանին և զարժանի․
Այսպէս յազգուէ ցերեկոյ հէքն հընձողաց յածէր ընդ հետս
Ինքն յինքեան ըղՏէրն օրհնեալ և պընդելով ըղհասկսն 'ի ծոց․
Եւ 'ի կարճել արևու յուսըս բարձեալ զորայից խուրձ,
Բեռըն խոշոր ազնիւ ուսոց, և մեղմընթաց ոտընփոխիւք
Յառաջեալ դարձ առնէր 'ի բնակարանըն ցանկալի․...

Այլ սակայն կոչէ զձեզ, օրիորդիկք, մայրն հինաւուրց,
Որ ուշիւ 'ի վաստակ ժիր չերասից ուղեշս ոստոց
Եւ տերևս 'ի ձէնջ խընդրէ և զանտառակըն յօրինել,
Ուր ըզթելսն անկանեն զարմանաշքանչըն գործուածոյն․
Ճարակեալք 'ի թըթենիս արդէն զ'երկար եղեն 'ի քուն,
Մաքրեցան և անկողինքն և ծըծեցին քաղցըր բուրմունս․
Արդ զընտանի խընամոց գեղեցիկ վարձս հատուցանեն,
Զի համայն 'ի պատեանըս յոսկեղէն և յարծաթի
Զգեցուսցեն սիրուն զանտառն և ցընծասցէ մայրն հինաւուրց․
Եւ դուք բարեբաստիկք լըցջիք առատ հըտպըտանօք,
Եւ 'ի ժամու հարսանեացդ 'ի պարեգօտս և յանկուածոյս․
Ա՛յսչափ 'ի ձեր օգուտ խընամակալ լինին Երկինք․

Անդ ուրեմն հարթի կալն և չեղջք և դէզք սփռին յերկիր․
Անդ ամբառնայ փոխ 'ի փոխ զինեալ բազկաց կուռ հարուածումն,
Որ է զի մեղմ, է զի ուժգին, մերթ հանդարտիկ՝ մերթ շուտափոյթ
Ըզքաղեալ հունձս ոստուցանէ զոգաւորեալ, հարու քըրքըրէ․
Հասկաւէտ 'ի պատենից ոստնու 'ի շեշտ թաղեալ հատիկն
Ի ներքոյ թափուր յարդին կալով խոնարհ 'ի յանկողնի․
Աստ երկժանիք, երկճիղ բըրիչք, աստ ծն տըրմուխք և սայլակք
Ըզմանրեալ վարել կեղևս, ըզմերկ ցօղուն, սին մընացորդս․
Հապ հեծանոցք 'ի կուտել, և ընդ կուտեըն հոսել հողմոյ․
Իբրև զանձրև նա թօթափի անօսըր ծանր ոլորտաձև,
Ամպամած թանձրախիտ վերամբառնայ փոշին 'ի հոծ,
Ըզկերպարանս և ըզհանդերձս երփնեալ ճերմակ ժիր հասողին․

Արդ ո՞ւմ կալ է․ չափեալ հատիկն և բաժանեալ 'ի դէզ ս'ի կոյտ
Զըշտեմարանսն ատտալեան պարտասեսցէ ծանու բեռամբ․
Եւ ելցէ աստ մօտ յաշունն 'ի նքայր թեթև չոյտ հոլովող,
Որ ակօսից սակս և տըրոց զընտրելագոյնն և զանարատ
Ուրոյն բաժանեսցէ յանպիտանեացն 'ի թարմատար․...

Ա՛յլ խընամք, այլ պարգևք․ ժամանակ է այս ցընծալից
Միջամուխ 'ի պըտղաւէտ լինել դարաստս և ծառաստանս
Եւ ըզմեղանս ուխտական լընուլ ընտիր 'ի սակառս․
Ո՛հ, պըտղոց քանիօն առատութիւն չըքնաղագեղ․
Քանի՜ բուրումն անուշաբոյր․ սա լիախորժ տըտիպ 'ի՛ համ,
Միւսն յօշարակ յօրանայ․ և համօրէնք քաղցրաճաշակք,
Կենսաւէտ և հիւթագեղ նորադալար խայրեաց 'ի հոյզ
Ամոքումն հեշտ՝ պարտասեալ ըստամոքաց մատուցանեն․
Յերփներանգ գունեան ածուս ծիրանեփայլ ծագէ ելակ
Եւ ցանկալի լի դըրգալօք պաշտի յերկրորդ սեղանս հաճոյ․
Սեորակք կարմրորակք ողկուզօրէն բազմակերպիկք
Կեռասք կան անձրևել, չըլոր չողայ լերկ և ողորկ
Եւ ըզնեարդսն 'ի մեղմիկ խահամօքէ հասունութիւն․
Մեղրանոյշ և համեղ պատառի թուզ, և նարընջից
Լիահոտ ծիծաղին զով ևս ալիք Բենակեան․

digitised by A.R.A.R.@

Ծիծաղին վըճիտ ես օդ.ք. պարծանք Պարսից գեղանին դեղձ
Ոսկեփայլ աղուամազիւք պըճնազգեստեալ և համեմի
Ի կակուղ յանոսկըր միս սիրափափագ հոյզս անուշից.
Հոյզն այն քաղցրիկ և ուղփեան՝ յոր լիադեղ և թաթաւուն
Լիւղին շըրթունք, և ծընօտք սպասահարկու թանան 'ի նոյն....

Ջանխուլ հովիտք ծըմակաւորք, անտառք ամայք, չըքնաղ աղբիւրք,
Անձաւք կանաչազեղք և հոտեւանք. 'ի ձէնջ խընդրեն
Կաղղուրումըն քաղցր զգայունք, և հոգի գիւր խաղաղ հանգիստ։
Ի թանձրախիտ տօթաժամու՝ մինչ յերկնից մէջ վառ ևս է աստղ,
Ընդ թաքթաքուր ձեր բստուերաւ հեշտ և կամակ է նինջ քընոյ,
Եւ յորդորէ մեզմ սըղոխ ընդ սաղարդունսըն խայտացեալ.
Մեղուին տրզզիւն և ջուրց հոսանք շուրջ մըրմընջեալ ընդ գահաւանդ՝
Ջով մըխիթար և զմայլումն ազդէ զգայնոց՝ ամոքէ զփրտ։
Օթևանք առանձնութեան, յորըս յաճախ Մուսայք բնակեն
Եւ հարսունք յաւերժականք վայելչագեղք օթևանին,
Ուր արձագանգ միայնութեան կըրկնին երգոց տարփատենչիկ։
Ուր թէ քեզ հաճոյ թուեսցի չընորհաշո՛ւքդ իմաստասէր
Բարձրախոհ իմաստիւք տալ ճարակումըն համճարոյդ,
Ո՛չ լիցի ոք բընաւ գխորհուրդ մըտաց քոց ամբոխել....

Թարգմ. Հ. Գ. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ — ՑՈՎԲ. ՊԱՐԳԻԷՐԻ

ԴՊՐՈՑՔ

ԵՒ

ԽՆԱՄՔ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Ե

Արիւն

Տղայք շատ անգամ այնպիսի անկանոն կեանք մը կը վարեն, որ կրնայ պատճառ ըլլալ կարևորագոյն գործարանաց միոյն կամ բոլոր մարմնոյն հիւանդանալուն։ Կենաց հիմն արիւնն է. ուստի նա միայն կրնայ առողջ ու հանգիստ ապրիլ, որ բաւական քանակաւ առողջ արիւն ունի երակացը մէջ և արեան կանոնաւոր շրջան։ Ամենայն ոք փոյթ պիտի ըլլայ 'ի կանոնի ունել բոլոր մարմնոյն արեան շրջանը ու ձևացումը, և զգուշանալ այն ամեն բաներէ որ խռովելով այդ կարգը՝ կրնայ ազդեցութիւն ընել արեան քանակին, յատկութեան ու ընթացից վրայ։ Եւ որովհետև կայ մեծ բազմութիւն մը մարդկան որ չի հաւատար այս ճշմարտութեան, և կը տեսնանք զօրհանապազ մարդկութեան վատառողջ ու դժբախտ սերունդ մը յառողջութեան մասին, վասն որոյ մեծ ամօթ ու նախատինք է անոնց՝ որոց յանձնուած է ապագայ մարդկութեան հոգը։

Բաւական քանակ մ'առողջ արեան անհրաժեշտ կարևոր է տղայոց դպրոցական հասակնուն մէջ, վասն զի այնպիսի տարիքի մէջ են, յորում արեան մեծ քանակ մը կը սպառի բոլոր մարմնոյն աճելութեան և մտաւոր աշխատութեանց պատճառաւ։ Ծնողք ամեն բանէ աւելի փոյթ պիտի ըլլան արեան կանոնաւոր քանակին ու յատկութեան՝ յարմարաւոր սննդեամբք ու օդափոխութեամբ, մանաւորապէս ննջարանաց մէջ։

Բայց նոյն իսկ 'ի դպրոցս կրնանք վնասել տղայոց, թէ որ մեծ քանակ մը սպառել տանք արեան մտաւոր ու մարմնաւոր չափազանց աշխատութեամբք, կամ ապականեալ օդ ընչել տանք դպրոցական սենեկաց մէջ, և կամ վրկենք զիրենք չափաւոր քանակ ջուրէն, չթողլով որ խմեն ուզած ժամանակնին։

Շատ տղաք կը ստիպուին ելլալ դպրոցէն

digitised by A.R.A.R.@